

սուրբ յԵրուսաղէմ եւ հառաջէաք ի խորոց սրտէ : Եւ այս Չէշմէլուս երկու մեծ չաշմա 30 կայր , ուստի յորդ աղբիւր բխէր : Գարձեալ պարոնտէր Գրիգորն կերակուր երես եւ անուշ գինի , այլ եւ փիլաֆ ետ եփել եւ մխլթարէր զմեզ սիրով . եւ զգիշերն անդ օթեցաւ ընդ մեզ : 35

Եւ ընդ առաւօտս կանխեալ օրհնէր զմեզ եւ ուղարկէր ընդ երկայնաձիգ ճանապարհն : Եւ մեք անկեալ յոտս նորա՝ համբուրէաք զգարչապարս ոտից նորա լալով եւ մորմոքելով զհրաժարական վերջին ողջոյնն տալով . 40 եւս առաւել զգրկումն մեր հոգեւոր հօրէն բաղմերախտ ախոսէաք : Եւ տվեալ ամենայն ոք բստ կարեաց՝ ժամուց , զաջն համբուրէաք . եւ լալով գնայաք , զի եւ ի հոգեւոր բարի հովւէն զրկեցաք : 45

Զի ոչ միայն քրիստոնեայք , այլ եւ Հրեայք որ անդ գնան , մնան անդ եւ այլ ոչ դառնան . եւ ամէն տարի Լէհու գնան , զոր ես տեսի գնոսա եւ խօսեցայ . զի ամէն աշխարհէ գնայ նոցա ողորմութիւն ի Հրէից : Եւ մեզ 50 պարտէր անդ մնալ , քան թէ դառնալ եւ ավստոսալ :

ԱՐՔ ՃԳՆԱԶԳԵԱՅՔ Ի Ս . ՅԱԿՈՒ

Եւ կայր ի սուրբ Յակոբն Երուսաղէմայ՝ Հայոց լաւ մարդիկ , որ անդ մնացեալ էին ,

29 հառաջէաք : — 34 յօթեցաւ : — 38 ոտս : — 47 հրէայք : — 49 խօսեցա : — 54, 56 մարդիք :